

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ԶԵԿՈՒՅՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ՄԱՍԻՆ (2013 Թ.)
ՀԱՅԱՍՏԱՆ (ԽՈՒՄԲ 1)

20 հունիսի, 2014թ.

Հայաստանը սկզբնաղբյուր և, ավելի փոքր ծավալով, վերջնակետ երկիր է թրաֆիքինգի ենթարկվող տղամարդկանց, կանանց և երեխաների համար, մասնավորապես կանանց և տղամարդկանց հարկադիր աշխատանքի և սեռական թրաֆիքինգի մասով. ահագնացող խնդիր է կանանց և երեխաների սեռական ու աշխատանքային թրաֆիքինգը երկրի ներսում: Հայ կանայք և աղջիկները սեռական թրաֆիքինգի են ենթարկվում երկրի ներսում, Միացյալ Արաբական Էմիրություններում (ՄԱԷ) և Թուրքիայում: Հայ տղամարդիկ հարկադիր աշխատանքի են ենթարկվում Ռուսաստանում և, ավելի փոքր ծավալով, Թուրքիայում: Հայ կանայք և երեխաները երկրի ներսում խոցելի են համարվում մուրացկանության մեջ ներգրավվելու տեսանկյունից: Պաշտոնատար անձանց կողմից հաղորդում է եղել երկու տղաների մուրացկանության հարկադրելու վերաբերյալ, ովքեր յուրաքանչյուր օրվա համար սահմանված գումարը մուրացկանության միջոցով չստանալու դեպքում պարտադրված են եղել գողություն կատարել: Որոշ երեխաներ երկրի ներսում աշխատում են գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների մատուցման ոլորտներում: Մարդկանց թրաֆիքինգի առումով խիստ խոցելի են մնում գյուղական բնակավայրերի կրթական ցածր մակարդակ ունեցող տղամարդիկ և խնամատար հաստատությունների երեխաները:

Հայաստանի կառավարությունն ամբողջությամբ բավարարում է թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին: 2013թ. հակաթրաֆիքինգային քաղաքականությանը, օրենսդրությանն ու պրակտիկային առնչվող հարցերում առկա բացերի մեղմմանն ուղղված աշխատանքներում բարելավվել է համակարգումն ու համագործակցությունը կառավարության բոլոր ճյուղերի միջև: Կառավարությունը շարունակել է պահպանել ամուր գործակցային ու աշխատանքային հարաբերությունները հակաթրաֆիքինգային հասարակական կազմակերպությունների, տեղական ՋԼՄ-ների, դոնոր կազմակերպությունների ու տարածաշրջանային գործընկերների հետ: Այս ջանքերի արդյունքում ավելացել են թրաֆիքինգի գծով դատապարտումների թիվն ու զոհերի բացահայտման դեպքերը, այնուհանդերձ, դեռևս բացեր կան աշխատանքային թրաֆիքինգի զոհերի բացահայտման հարցում: 2013թ. Հայաստանի կառավարությունը մշակեց օրենքի նախագիծ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին. այնուհանդերձ, տուժողների ու վկաների պաշտոնական պաշտպանության բացակայությունը շարունակում է մնալ մտահոգիչ:

Առաջարկներ Հայաստանին.

Բարելավել ջանքերը հարկադիր աշխատանքի զոհերի հայտնաբերման հարցում, այդ թվում նաև խորացնել զոհերի բացահայտման հետ կապված ուսուցումը շփման օղակի աշխատակիցների համար, բարեփոխումներ անցած տեսչության աշխատանքային տեսուչներին օժտել անսպասելի ստուգայցերի միջոցով զոհերին բացահայտելու իրավասություններով և ամրապնդել նրանց համագործակցությունն իրավապահների հետ. ապահովել նրբանկատ վերաբերմունքին ուղղված ուսուցում դատավորների համար՝

նպաստելու թրաֆիքինգի գոհերի ապրումները հասկանալու մշակույթի խորացմանը. շարունակել աշխատանքը Ռուսաստանի իշխանությունների հետ հարկադիր աշխատանքի հայ գոհերին բացահայտելու և աշխատանքային թրաֆիքինգ իրականացնողների նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հարցում. շարունակել աշխատանքը հասարակական կազմակերպությունների հետ գտնելու ուղիներ Թուրքիայում թրաֆիքինգի հայ գոհերին բացահայտելու ու աջակցելու համար. շարունակել աշխատանքը հասարակական կազմակերպությունների հետ գոհերի վերաինտեգրման հարցում. ձևավորել փոխհատուցման մեխանիզմ թրաֆիքինգի գոհերի համար. շարունակել աշխատանքը հասարակական կազմակերպությունների հետ գոհերի անվտանգության բարելավման և ապաստարանում գտնվելու կամ աջակցություն ստանալու ժամանակահատվածում նրանց ազատ տեղաշարժի ապահովման հարցերի շուրջ. իրազեկվածությանն ուղղված արշավները հասցնել գյուղական ու սահմանամերձ համայնքներ, ինչպես նաև խնամատար հաստատություններից դուրս եկող երեխաներին. լիցենզավորել, կանոնակարգել ու ուսուցում ապահովել տեղական զբաղվածության ծառայությունների և գործակալների համար, որպեսզի նրանք կարողանան օգնել կանխել Հայաստանի քաղաքացիների հարկադիր աշխատանքն արտասահմանում. և շարունակել ակտիվ գործընկերությունը քաղաքացիական հասարակության խմբերի հետ:

Քրեական հետապնդում

Հայաստանի կառավարությունն ամրապնդել է իրավապահ ջանքերը՝ ավելացնելով թրաֆիքինգի գործերով քննությունների, քրեական հետապնդումների և դատապարտումների դեպքերը: Հայաստանի քրեական օրենսգրքի 132 և 132-2 հոդվածներով արգելվում է թե՛ սեռական թրաֆիքինգը, թե՛ աշխատանքային թրաֆիքինգը և այդ հոդվածներով նախատեսվում է 5-ից 15 տարվա ազատազրկում, ինչը բավարար խիստ և համարժեք պատիժ է այնպիսի ծանր հանցանքների համար, ինչպիսին է բռնաբարությունը: 2013թ. փոփոխություն կատարվեց 138-րդ հոդվածում՝ արտացոլելու 18 տարին չլրացած անչափահասի ու 14 տարին չլրացած անչափահասի բռնաբարության դեպքերով սահմանվող պատժաչափը, որը կազմում է 8-ից 15 տարվա ազատազրկում: 2013թ. պատկան մարմինները հետաքննել են թրաֆիքինգի 10 գործ (նույնքան նոր գործ է քննվել նաև 2012թ.), որոնց ներքո թրաֆիքինգի հետ կապված հանցանքների մեղադրանք է ներկայացվել 12 հոգու (2012թ.՝ 18 հոգի), այդ թվում՝ երեխային մուրացկանության մեջ հարկադիր ներգրավելու մեկ դեպք. նոր հանգամանքներ ի հայտ գալու հիմքով վերաբացվել է երկու լրացուցիչ գործ:

2013թ. Հայաստանի դատարանների կողմից թրաֆիքինգ իրականացնելու համար դատապարտվել է 15 հոգի (2012թ.՝ 10 հոգի): Գործերից մեկի շրջանակում 3 տղամարդ և 5 կին են դատապարտվել, ովքեր դեպի ՄԱԷ թրաֆիքինգի են ենթարկել ութ կանանց և աղջիկների: Պատժաչափերը եղել են 4-ից 11 տարվա ազատազրկում: Թրաֆիքինգ իրականացնողներից մեկի պատիժը, ում ամուսինը ևս դատապարտվել էր, նվազեցվեց երկու տարվա պայմանական ազատազրկման՝ հաշվի առնելով իրավապահների հետ համագործակցելու փաստը և երեխաների հետագա խնամքի ապահովման հարցը: Աշխատանքային թրաֆիքինգի գործերով քրեական հետապնդումները շարունակում էին դժվարություններ ստեղծել Հայաստանի քննիչների համար, քանի որ դեպքերի գերակշիռ մասը փաստացի տեղի էին ունենում Ռուսաստանում, որի հետ իրավապահ համագործակցությունը մնում է դժվարին: Թուրքիայի հետ դիվանագիտական

հարաբերությունների բացակայությունը ևս խոչընդոտում էր թրաֆիքինգի հայ գոհերի նույնացմանն այնտեղ:

Թրաֆիքինգի գործերում փորձառություն չունեցող դատավորներն ըստ հաղորդումների գոհերի նկատմամբ պակաս նրբանկատ էին, լիարժեք հաշվի չէին առնում գոհերի խոցելիությունն ու հոգեվիճակը: Որոշ դեպքերում պաշտպանության կողմի փաստաբանը գոհերին ենթարկել է հարցաքննության: Կառավարությունը հարյուրավոր աշխատակիցների համար իրականացրել է մարդկանց թրաֆիքինգի, այդ թվում՝ հարկադիր աշխատանքի հարցերով ուսումնական ու իրազեկման ծրագրեր: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը թրաֆիքինգի հարցերով ուսուցումներ է անցկացրել ավելի քան 250 քաղաքացիական ծառայողների համար. մոտ 340 ոստիկանության աշխատակից ու ոստիկան ուսուցում է անցել Ոստիկանական ակադեմիայում, իսկ Արդարադատության նախարարությունը պարտադիր ուսուցում է իրականացրել քրեակատարողական հաստատությունների աշխատողների ու սպայական կազմի համար: Հայաստանի կառավարության կողմից թրաֆիքինգում պետական պաշտոնյաների հանցակցության մասին քննությունների, հետապնդումների ու դատապարտումների մասին հաղորդումներ չեն եղել:

Պաշտպանություն

Հայաստանի կառավարությունը խորացրել է թրաֆիքինգի բացահայտված գոհերի պաշտպանությանն ուղղված ջանքերը՝ խորհրդատվություն ապահովելով խնամատար հաստատություններից դուրս եկող երեխաների համար և համաֆինանսավորելով թրաֆիքինգի գոհերի հետ աշխատող երկու հասարակական կազմակերպություններից մեկին: Կառավարության կողմից 2013թ. ընթացքում պաշտոնապես նույնացվել են թրաֆիքինգի 5 տղամարդ և 13 կին գոհեր, ընդ որում գոհերից 8-ը եղել են երկրի ներսում հարկադիր մուրացկանության մեջ ներգրավված անձինք. նրանց բոլորին առաջարկվել է աջակցություն, այդ թվում՝ ուղղորդում հասարակական կազմակերպությունների ապաստարաններ: Հիշյալ 18 գոհերից 17-ը նույնացվել են ոստիկանության կողմից, իսկ նախորդ տարվա 8 գոհերից 7-ն էին պաշտոնապես նույնացվել ոստիկանության կողմից: Մեռական թրաֆիքինգի 10 կին գոհերից 5-ի գոհականացումը տեղի էր ունեցել Հայաստանում, իսկ մյուսներինը՝ ՄԱԷ-ում: Կառավարությունը մասամբ ֆինանսավորել է երկու հասարակական կազմակերպություններից մեկի ապաստարանի գործունեությունը, որտեղ ապաստան էին գտել 20 գոհեր, ընդ որում 14-ը հայտնաբերվել են հաշվետու ժամանակահատվածում: Կարճաժամկետ ապաստարանում աջակցություն է ցուցաբերվել 9 գոհերի, իսկ երկարաժամկետ ապաստարանում՝ 29 գոհի, որոնցից 11-ն ուղղորդվել էին այնտեղ 2012թ.-ին: Կառավարությունը բոլոր գոհերին ապահովել է իրավական, հոգեբանական աջակցություն և բուժօգնություն: Բացի այդ պատկան մարմինները գոհերին ներգրավել են նաև տարբեր սոցիալական, կրթական և զբաղվածության ծրագրերում և ապահովել են կացարանով: Սոցիալապես խոցելի խմբերի համար նախատեսված պետական ծրագրի շրջանակում թրաֆիքինգի 4 գոհերի համար ապահովվել է անվճար բուժօգնություն՝ սկսած կլինիկական բուժօգնումից մինչև վիրահատություն: Անվտանգության նկատառումներից ելնելով՝ ապաստարաններում տեղավորված գոհերից պահանջվել է առանց ուղեկցության դուրս գալու դեպքում ապաստարանի անձնակազմին տեղյակ պահել այդ մասին, սակայն նրանք ազատ էին իրենց հայեցողությամբ հեռանալ ապաստարանից, եթե աջակցության կարիք այլևս չէին զգում: Ծառայություններն հավասարապես հասանելի

են եղել թե՛ կին, թե՛ տղամարդ գոհերի համար: Հաշվի առնելով անչափահաս գոհերի փոքրաթիվ լինելու հանգամանքը՝ անչափահասների համար առանձին ապաստարան չի եղել, սակայն հարկ եղած դեպքում այդ գոհերին հնարավոր է եղել տեղավորել թրաֆիքինգի գոհերի ապաստարանում կամ ուղղորդել դեպի մանկական խնամատար հաստատություններ: Թեպետ 2013թ. ընթացքում օտարերկրացի գոհեր չեն բացահայտվել, սակայն նախկինում օտարերկրացի գոհերը ստացել են ժամանակավոր կացության թույլտվություն ու Հայաստանում աշխատելու իրավունք. նախորդ հաշվետու ժամանակահատվածներում կառավարությունն օտարերկրացի գոհերին չի արտաքսել: Կառավարությունը մոտ 72.000 ԱՄՆ դոլարին համարժեք ֆինանսավորում է տրամադրել խնամատար հաստատություններից դուրս եկող երեխաների խորհրդատվության ու աջակցության համար, ինչպես նաև մոտ 6.800 ԱՄՆ դոլարին համարժեք գումար է հատկացրել կրթաթոշակների ու միանվագ աջակցության համար, որը նույնն է, ինչ նախորդ տարիներին: 2013թ. չեն ավարտվել հարկադիր աշխատանքի գոհերի նույնացման հարցում աշխատանքային տեսչության ունեցած դժվարությունների կարգավորմանն ուղղված բարեփոխումները, ինչպես նաև բոլոր պետական տեսչությունների միավորման գործընթացը: Պատկան մարմինների կողմից պաշտոնապես նույնացված բոլոր գոհերը կամավոր աջակցել են ոստիկանությանը թրաֆիքինգի գործերի քննության հարցում: Վերջին մի քանի տարիների ընթացքում գոհերից շատերը, տեսնելով իրենց գործերի քննության ու հանցագործներին պատժելու իրավապահների շարունակական ջանքերը, ավելի մեծ վստահություն են ձեռք բերել վերջիններիս հանդեպ: 2013թ. չեն եղել հաղորդումներ թրաֆիքինգի նույնացված գոհերի անհարկի կալանավորման մասին. գոհականացման հետևանքով գործած հանցանքների համար նրանց նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվել:

Կանխարգելում

Հայաստանի կառավարությունը շարունակել է ի ցույց դնել մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանն ուղղված գործուն ջանքեր: Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ հանրային իրազեկվածության մեծացման, սոցիալական գովազդի (ներառել է նաև կոմերցիոն սեքսի պահանջարկի նվազեցմանն ուղղված ուղերձներ) ֆինանսավորման, թրաֆիքինգին վերաբերող հեռուստատեսային հաղորդման և Հայաստանի 15 քաղաքներում երիտասարդներին ուղղված սեմինարների ու դերախաղային սցենարների անցկացման համար Հայաստանի կառավարությունը ծախսել է մոտ 19.400 ԱՄՆ դոլարին համարժեք գումար, որը նույն է, ինչ նախորդ տարվա համար ծախսված գումարը: Պետական տարբեր կառույցներ շարունակել են ձեռնարկել կանխարգելմանն ուղղված բազմաթիվ գործողություններ, այդ թվում՝ լրագրողական արհեստավարժության մեծացման նպատակով լրագրողական մրցույթի (դրամական պարգևով) անցկացում հակաթրաֆիքինգային հարցերի շուրջ, հակաթրաֆիքինգային սոցիալական գովազդի, ինչպես նաև այլ հաղորդումների հեռարձակում ազգային ու տեղական հեռուստաընկերությունների եթերից՝ հիմնական եթերաժամերի ընթացքում: Կառավարությունը թրաֆիքինգի վերաբերյալ իրազեկման ուսուցում է ապահովել նաև աշխատանքային տեսուչների, սոցիալական աշխատողների, հասարակական կազմակերպությունների, ուսուցիչների, լրատվամիջոցների ու ուսանողների համար: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով միջգերատեսչական խորհուրդը, որտեղ նախագահում է փոխվարչապետը, և միջգերատեսչական աշխատանքային խումբը շարունակել են կանոնավոր նիստեր գումարել ու համակարգել

կառավարության թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների ծրագրի իրականացումը՝ սերտորեն համագործակցելով հասարակական կազմակերպությունների ու միջազգային կառույցների հետ: Երկու հասարակական կազմակերպություններն էլ գործարկել են թեժ գիծ, որոնք տարբեր ՁԼՄ-ներով գովազդվել են ողջ երկրով մեկ, ինչպես նաև կազմակերպել են իրազեկման արշավներ՝ տարբեր միջոցառումների ժամանակ: 2013թ. ոստիկանությունը միգրացիոն թեժ գծում ներառեց նաև հակաթրաֆիքինգային ուղղվածությունը. այս հեռախոսահամարն ամենօրյա կտրվածքով գովազդվում էր հեռուստաէթերից ոստիկանության ամենօրյա հաղորդաշարի ընթացքում: Հաշվետու ժամանակահատվածում կառավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է հրապարակել թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում իրականացվող աշխատանքների վերաբերյալ: Իշխանությունները հակաթրաֆիքինգային ուսուցում են անցկացրել միջազգային խաղաղապահ ուժերի կազմում օտարերկրյա պետություններում ծառայության մեկնող զինծառայողների համար: